Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանը գտնում է, որ թիվ **ԵԴ2/0196/02/24** քաղաքացիական գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով, ուստի «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար 05.12.2023 թվականին հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգը անվավեր (չկայացած) ճանաչելու պահանջի մասին հայցադիմումի ընդունումը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ և 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար 05.12.2023 թվականին հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգը անվավեր (չկայացած) ճանաչելու պահանջի մասին հայցադիմումի ընդունումը, մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**